

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԲԱՆԱԴԵՏՈՐ


(Արամ Ղանալանյանի ծննդյան 60-ամյակի առթիվ)

Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ, գիտության վաստակավոր գործիչ Արամ Ղանալանյանը ծնվել է 1909 թ. փետրվարի 12-ին Ախալցխայում, գիտության հարգն ու արժեքը գիտակցող մանկաչարժ Տիգրան Ղանալանյանի ընտանիքում:

Տարրական և յոթնամյա կրթությունն ստացել է հայրենի քաղաքում, իսկ միջնակարգը՝ Թբիլիսիում: 1925 թ. ավարտում է Թբիլիսիի 72-րդ աշխատանքային դպրոցը, երկու տարի անց ընդունվում Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը: Այստեղ ուսանելով լեզվագրական բաժնում, նա աշակերտում է նշանավոր հայագետներ Մ. Արեղյանին, Հր. Աճառյանին, Գր. Ղափանցյանին, Ա. Տերտերյանին և մասնագիտանում հայոց լեզվի ու գրականության գծով: Հայ ժողովրդական բանահյուսության նկատմամբ ցուցաբերած մասնագիտական նետաքրքրության համար շորրորդ կուրսում, ըստ ժամանակի բուհական ընդունված կարգի, համառվում է «առաջ քաշված» ուսանող հիշյալ առարկայից, որը այդ ժամանակ դասավանդում էր Մանուկ Աբեղյանը: Վերջինիս խորհուրդներով ու ցուցումներով Ա. Ղանալանյանը խորամուխ է լինում ժողովրդական բանահյուսության ուսումնասիրության մեջ: 1931 թ. ավարտելով համալսարանը, նա աշխատանքի է անցնում Երևանի դպրոցներում իբրև հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1932 թ. աշխատանքի է ընդունվում Հայաստանի նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտում: Այս թվականից էլ սկսվում է Ա. Ղանալանյանի գիտական գործունեությունը:

Սկզբում նա աշխատում է հիշյալ ինստիտուտում, ապա Հայաստանի կուլտուրայի պատմության, պատմության և գրականության, Արմֆանի լեզվի և գրականության ինստիտուտներում, նախ իբրև կրտսեր, ապա և ավագ գիտաշխատողի պաշտոններով՝ ամենուրեք և միշտ զբաղվելով հայ ժողովրդական բանահյուսության հետազոտությամբ: 1942 թ. Ա. Ղանալանյանը պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա՝ «Արովյանը և ժողովրդական բանահյուսությունը» թեմայով: 1943—59 թթ. նա վարում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի հայ ժողովրդական բանահյուսության սեկտորի վարիչի պաշտոնը: Ըր գիտա-հետազոտական աշխատանքներին զուգընթաց Ա. Ղանալանյանը զբաղվում է նաև գիտա-մանկավարժական գործունեությամբ: Տարիներ շարունակ նա եղել է Երևանի պետհամալսարանի (1937—1941), Արովյանի անվան (1934—1951) և Երևանի պետական հեռակա մանկավարժական (1936—1948) ինստիտուտների հայ ժողովրդական բանահյուսության առարկայի սիրված ու հարգված դասախոսը, ուսանողների մեջ ջիւրմ սեր ու հետաքրքրություն արթնացնելով հարազատ ժողովրդի բանավոր հոգևոր մշակույթի նկատմամբ: Նրա ձեռքի տակ է դաստիարակվել ու աճել արդի հայ բանագետների հիմնական միջուկը, իր գիտական մեծ ծառայությունների համար Ա. Ղանալանյանը 1965 թ. ընտրվում է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, 1967 թ. նրան շնորհվում է գիտության վաստակավոր գործչի պատվանուն: «Սասունդի



Գավիթ» համահավաք հյուսվածո բնագիրը կազմելու համար 1940 թ. պարզևստրվել է Սովետական Հայաստանի Գերագույն սովետի պատվոգրով, 1951 թ.՝ «Պատվո նշան» շքանշանով:

* * *

Ա. Ղանալանյանի մուտքը հայ բանագիտության անդաստանը չի նշանավորվում հեղաշրջիչ փոփոխումներով և ոչ իսկ մեծադղորդ հավաստիացումներով, նա ներս է մտնում իրրև մի համեստ, բայց խոշուն ու պայծառամիտ աշխատավոր և իր գործունեությունն անմիջապես սկսում «սև» ու սրտամաշ աշխատանքով: Առաջին գործը՝ Մ. Արեղյանի խորհրդով, հայ ժողովրդական բանահյուսության մատենագիտության ստեղծումն էր, որ լինելով երկարատև տքնության արդյունք, դառնում է այն հաստատուն նախահիմքը, որից հետագայում նա միշտ ելնում և որի վրա խարսխում է իր գիտական աշխատությունները: Ապա 1932—34 թթ. Կ. Մելիք-Օհանջանյանի ցուցումներով նա մշակում է Ե. Լալայանի 1915—1916 թթ. բանահյուսական խմբարչւմի ձեռագիր նյութերը և կազմում շուրջ 1000 հերթաթի համառոտագրությունները՝ հայկական հերթաթների ապագա լիակատար համաբարբառի համար: Այս նախնական «սև» աշխատանքները հայապատրաստում են նրա անցումը դիտական ինքնուրույն գործունեության:

Ա. Ղանալանյանի բանագիտական գործունեությունը միևտար ու միակողմանի չէ. սովետահայ բանագիտության առաջամարտիկի և ուղի համահարթողի նրան վիճակված պատմական դերը պարտադրում էր առարկայի բազմազան ու համակողմանի ընդգրկում, նյութի ու մեկնաբանությունների մատուցման այլազան եղանակներ: Բանահյուսական և բանագիտական տեքստաբանություն, առանձին ժանրերի տեսական հետազոտություն, բանագիտության տեսություն և պատմություն, գրականության և բանահյուսության փոխառնչություններ, բանահյուսության դասընթացի մշակում, հայ բանահյուսության և բանագիտության մասնաշաղկապներում և պրոպագանդում, բանահավաքություն,— ահա այն հիմնական զբաղմունքներն ու խնդիրները, որ բնորոշում են Ա. Ղանալանյանի շուրջ երեսունհինգամյա գիտական գործունեությունը: Եվ այսուամենայնիվ նրա գիտական վաստակի ծանրության կենտրոնը բանահյուսական տեքստաբանությունն է և առանձին ժանրերի գիտական ուսումնասիրությունը: Այստեղ են երևան գալիս և առարկայանում գիտնականի վերլուծական մտքի տաղանդն ու բանասիրական կարողությունները:

1937 թ. լույս է տեսնում Ա. Ղանալանյանի գիտական երախայրիքը՝ «Հայ շինականի աշխատանքի երգերը»¹: Որքան էլ ժողովրդական երգերը մեր բանահյուսության ամենալավ ուսումնասիրված տեսակներից էին, այնուամենայնիվ դրանց ինքնուրույն մաս կազմող աշխատանքային երգերը մնացել էին տակավին չհետազոտված: Եվ ահա, ձեռնամուխ լինելով դրանց, Ա. Ղանալանյանը 1934—1936 թթ. ընթացքում բանահյուսական-ազգագրական ապագիր ու անտիպ ամենատարբեր աղբյուրներից և անձամբ ժողովրդից գրառում ու հավաքում է մեր գյուղական աշխատանքային երգերի հայտնի ողջ ժառանգությունը, այն ենթարկում գիտական դասակարգման ու հետազոտության: Արդյունքը հայ գեղջկական աշխատանքային երգերի գիտական համահավաք բնագիրն է՝ գյուղական աշխատանքի տեսակների սկզբունքով համակարգված և օժտված էրաժակսն մի ամփոփ ուսումնասիրությամբ, ուր քննվում են աշխատանքային երգերի ծագման, բովանդակության հիմնական տոտիվների, գրառման, արվեստի և գրական մշակման խնդիրները: Եւ մի ամբողջական գիտական աշխատություն էր, որը տակավին 1935 թ. ձեռագիր վիճակում արժանանում է Մելքոնյան մրցանակի: Իր գիտաբանասիրական արժեքից բացի «Հայ շինականի աշխատանքի երգերը» ուղադրավ էր նախ պատմական առումով, մեր բանագիտության պատմության մեջ «Աստված ծներից» հետո դա բանահյուսական հուշարձանների երկրորդ գիտական համահավաք ժողովածուն էր: Եվ ապա այն նշանակալից էր մեկնաբանական տեսակետից ևս. առաջին անգամ մեզանում հատուկ ուշադրության և ուսումնասիրության էր արժանասում ժողովրդի սոցիալական կյանքի բանահյուսությունը, ուր անմիջականորեն հնչում էր աշխատավոր ժողովրդի ձայնը անցյալի իր անազատ իրավիճակի, սոցիալական ծանր պայմանների, գույքային ու դասակարգային անհավասարության, աշխատանքի մարդու հոգու տվայտանքների, հույսի ու հասարակական ձգտումների մասին: «Հայ շինականի աշխատանքի երգերն» այդպիսով ձեռք էր բերում նաև դարաշրջանին համապատասխան քաղաքացիա-

¹ «Հայ շինականի աշխատանքի երգերը», կազմեց և խմբագրեց Արամ Ղանալանյան, Երևան, 1937:

կան ու գաղափարաբանական նոր հնչեղություն, Ա. Ղանալանյանը իր երախայրիքով հանդես էր գալիս իրրև հասուն ու կազմակերպված գիտնական:

Իր գիտա-մանկավարժական բազմազան զբաղմունքներին առընթեր, 40-ական թվականների սկզբներից նա սկսում է զբաղվել հայ բանահյուսության ամենաբազմաբանակ, բայց և բնավ չհետազոտված ժանրով՝ առած-ասացվածքներով: Հայ բանահավաքների ջանքերով շուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում տպագիր ու անտիպ աղբյուրներում կուտակվել էր առած-ասացվածքների մի պատկառելի ժառանգություն: Բանահյուսական այդ տեսակը էությանմբ թեպետ շատ գայթակղիչ, բայց մանր ու բազմաբանակ լինելու պատճառով շարժում էր բանագետների երկյուղը, ուստի և մնում անձեռնմխելի: Ա. Ղանալանյանը իր անձանձիր աշխատասիրությամբ, դժվարությունները հաղթահարելու համբերատար ձգտումով ձեռնարկում է հայկական առած-ասացվածքների համահավաքման, դրանք անձամբ իր և ուրիշների կողմից նոր զբաղումներով համալրելու, գիտական դասակարգման ու հետազոտության գործը:

1951 թ. լույս է տեսնում «Հայկական առածանի»² և իսկույն իր վրա բեռնում գիտական հասարակության ուշադրությունը՝ թե՛ մեզանում, թե՛ Միության մեջ և թե՛ արտասահմանում:

«Առածանի» դառնում է ժողովրդի դարավոր իմաստությունն ամփոփող մի յուրօրինակ գանձարան, որին սիրով ու հիացմունքով էին դիմում բոլորը՝ մասնագետ-գիտնականից սկսած՝ վերջացրած ամենաշարքային ընթերցողով: Ապա, մեզանում առած-ասացվածքները առաջին անգամ էին արժանանում հատուկ ու ամբողջական հետազոտության, որը լույս էր սփռում այդ գեղեցիկ ու խորիմաստ ասույթների ժանրային բնույթի, նրանց ստեղծման ժամանակի, նրանցում խտացված պատմա-հնագիտական հիշատակների, հայ ժողովրդի քաղաքական կյանքի, հոգեկան նկարագրի, պատմա-աշխարհագրական միջավայրի, առած-ասացվածքների սոցիալական ու գաղափարական բովանդակության, բանաստեղծական լեզվի ու արվեստի, բնդհանուր ու փոխառյալ ստեղծագործությունների խնդրի և այլ հարցերի վրա: Դրանցով ամփոփ համակողմանիությամբ հաղափար էր կազմվում բանահյուսական մի ժանրի մասին, որ դեռ երեկ թեպետ կար, բայց մնում էր տակավին անստույգ ու չիմաստավորված: Եվ վերջապես, «Առածանի» ընդհանուր գիտական հետաքրքրության առարկա էր դառնում նյութի գիտական մատուցման իր ինքնատիս համակարգով:

«Առածանու» նկատմամբ հասարակական պահանջն ու հետաքրքրությունն այնքան մեծ էին, որ մի քանի տարի անց այն մեծ տպաքանակով վերահրատարակվում է³, նոր նյութով ու գիտական ապարատով համալրված:

Եթե առաջին հրատարակության մեջ բացակայում էին իմաստային-թեմատիկ և առարկայական համաբարբառը, անձնանունների և տեղանունների ցանկերը, ապա երկրորդ հրատարակության մեջ տեղակայվում են դրանք՝ զգալապես նպաստելով առած-ասացվածքների օգտագործմանը:

«Առածանուց» անմիջապես հետո՝ 1950-ական թթ. սկզբից ի վեր նա ձեռնամուխ է լինում հայկական ավանդությունների և ավանդական գրույցների հավաքմանն ու ուսումնասիրությանը: Իսկ ձեռնարկել նման մի ժանրի հավաքմանն ու հետազոտությանը, նշանակում էր կատարել մտավոր և ֆիզիկական երկարատև լարված աշխատանք: Եվ Ա. Ղանալանյանը շուրջ մեկուկես տասնամյակ ոգի ի բոլին մաքառում է բազմաթիվ դժվարությունների դեմ և ի վերջո տարիների հետազոտությունը պսակում է փայլուն հաջողությամբ: Արդեն սեղանի վրա է նորերս լույս տեսած նրա «Ավանդապատում» մեծածավալ հատորը⁴: Այն ընդգրկում է հայ ժողովրդի դարերով ստեղծած ու դարերի խորքից եկող ավանդությունների ու ավանդական գրույցների գիտականորեն կուտ համակարգված ժառանգությունը, ներածական մի ընդարձակ հետազոտությամբ:

Ղանալանյանի տարիների աշխատանքը ուղղված էր ոչ միայն ավանդությունների հավաքմանն ու հետազոտությանը, այլև նրանց գիտական համակարգման ճիշտ սկզբունքների հայտնաբերման ու մանավանդ նյութի և ուսումնասիրության բյուրեղացման վրա: Եվ նա նյութի էությունից բխող ամենաստույգ հետևությունների հիման վրա իսկ կառուցում է իր աշխատության սխեման ու տեսությունը: Ամենից առաջ նա ճշգրտում և վերջնապես որոշում է ավանդությունների ու ավանդագրույցների ժանրային սահմանները, որ այնքան շփոթությունների տեղիք էր տվել հայ և ընդհանուր բանագիտության մեջ: Ավանդությունների հիմնական նպատակը համարելով ոչ թե ունկրողիների գեղարվեստական պահանջների բավարարումը, այլ գլխավորապես նրանց «համապա-

2 Ա. Տ. Ղանալանյան, Հայկական առածանի, տեքստ և հետազոտություն ժողովրդական առածների ու ասացվածքների, Երևան, 1951:

3 Ա. Տ. Ղանալանյան, Առածանի, Երևան, 1960:

4 Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969:

տասխան աշխարհագրական, պատմական, կենցաղային, կրոնական ու այլ կարգի տեղեկություններ ու գիտելիքներ հաղորդելը», չանախախտ դրանով է բացատրում նաև ավանդությունների անհրաժեշտ կապը որոշակի առարկաների տեղավայրերի ու անձանց հետ, ինչպես նաև նրանց աշխարհային պարզ ու պատահական եղանակը, ձևի ու կառուցվածքի պարզունակությունն ու անկայունությունը, վիպական կայուն բանաձևերի ու ընդհանուր տեղիների առկայության երկրորդական բնույթը, ժողովրդի մեջ ժանրի անվան բացակայությունը: Բայց ամենաէականը ավանդությունների տեսակների որոշաբնական է, որը Ղանալանյանը լուծել է հաջողությամբ: Մերժելով տարբեր ժամանակներում տարբեր բանագետների կողմից առաջարկված՝ ավանդությունները ըստ բովանդակության մոտիվների կամ էլ ըստ գործող անձանց ու առարկաների դասակարգման սկզբունքները, Ղանալանյանն առաջ է քաշում ավանդություններն ըստ էության տեսակավորելու ելակետը: Ըստ առաջին նա ավանդություններն ու ավանդազրույցները բաժանում է երեք հիմնական խմբի. ստույգաբանական և բացառական ավանդությունների և վարկածաբանական ավանդազրույցների: Առաջին խմբում նա դասում է ժողովրդի մտքին անհասկանալի բոլոր ու անուններ ստուգաբանող ավանդությունները, երկրորդի մեջ՝ բնության ու հասարակության առարկաների ու երևույթների ծագումը բացատրող ավանդությունները, իսկ երրորդի մեջ՝ զանազան իրական ու մտացածին անձանց մասին կենսագրական տեղեկություններ հաղորդող ավանդազրույցները: Բացի այդ, Ղանալանյանը ըստ բնույթի տարբերակում է ավանդությունների ևս երեք խումբ՝ բուն ազգային, միջազգային և եկամուտ կամ փոխառյալ, որ հատուկ է բանահյուսական բոլոր տեսակներին առհասարակ: Ղանալանյանը իր այս մտահանգումները չի թողնում սոսկ տեսական մակարդակի վրա. նա իր տեսական եզրակացությունների հիման վրա էլ կատարում է համահամաք բնագրում լեզգրկված նյութի դասակարգումը, ինչպես նաև ներածական ուսումնասիրությունը:

Ավանդությունների ընդհանուր մանրային հատկանիշները քննող գլխից գալիս, ուսումնասիրությունը բաղկացած է երկու հիմնական բաժնից. ա) հալոց ազգային ավանդությունների քննություն, ուր հետազոտված են հայկական բնաշխարհին ու հավատալիքներին, ժողովրդի ներքին կյանքին, հասարակական հարաբերություններին, օտար նվաճող բռնակալների դեմ ազգային գոյության ու ինքնությունության համար հայ ժողովրդի մղած դարավոր պայքարին, այլազգի թշնամիներին և հայազգի հերոսներին ու նահատակներին, հայ ազգային հին ու նոր մշակույթի տարբեր կողմերին, իր նշանավոր գործիչներին նվիրված ավանդությունները. բ) միջազգային և եկամուտ ավանդությունների ուսումնասիրություն, ուր քննվում են տարբեր ժողովուրդների բանահյուսության մեջ տարածված և տեղայնացված, ինչպես նաև հարևան ցեղերից ու ազգերից փոխառված ավանդական սյուժեներն ու կերպարները, իրենց ազգային ու միջազգային ձևափոխություններով: Տարբերակելով ազգային ավանդությունները միջազգայիններից ու փոխառյալներից, Ղանալանյանը առաջինների տակ փաստորեն երևան է հանում ու առարկայացնում հայ ժողովրդի ծագման սկզբնավորումից մինչև նորագույն ժամանակներն ընկած մի քանի հազարամյակ ընդգրկող նրա ռազմա-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային, բարոյա-կենցաղային, կրոնա-գաղափարախոսական կյանքի տարբեր շրջանների ամենատարբեր կողմերի մասին ունեցած առասպելական, կիսաառասպելական, իրական և հաճախ էլ մտացածին, բայց խորիմաստ հուշապատումները, որոնց մեջ երևան են գալիս ժողովրդի յուրահատուկ պատմահայեցողությունն ու աշխարհայացքը՝ ի՞նչ հազարամյա անցյալի ամենատարբեր երևույթների նկատմամբ:

Այն ավանդական հուշապատումները, որոնք ունեն ստույգ պատմական հիմունք, Ղանալանյանը համեմատում է պատմական փաստերի ու վկայությունների հետ, բացահայտում նման ավանդությունների պատմական միջուկը, միաժամանակ ցույց տալիս վիպական, կրոնա-առասպելական և բանաստեղծական այն տարրերը, որոնցով բաղադրվել ու մարմնավորվել են ավանդությունները, դառնալով յուրատեսակ գեղարվեստական ստեղծագործություններ:

«Ավանդապատումը» մի կուռ ու միասնական գիտական աշխատություն է, որը գալիս է լրացնելու հայ բանասիրության մի մեծ բաց և ազդրուրագիտական իր խոշոր նշանակությամբ հայագիտության բոլոր մարզերի հետազոտողների, զրոյների ու բանաստեղծների համար բացելու է գործունեության լայն ասպարեզ:

Ա. Ղանալանյանը այն գիտնականներից է, որոնց համար վճռական նշանակություն ունի գիտության ժողովրդականացումը: Ժողովրդագիտությունը, որի կարևոր բնագավառներից է բանագիտությունը, ըստ Ա. Ղանալանյանի, ամենից առաջ պետք է ժողովրդին հասցնել և նրա համար դարձնել մատչելի ու հասկանալի: Նվ սա ոչ թե սոսկ մի տեսական պահանջ է, այլ համառ ու նպատակամիտված գործունեություն, որ ապացուցել է նա իր 35-ամյա գիտական կյանքի ընթացքում:

Ա. Ղանալանյանը սկզբից իսկ զբաղվում է բանագիտական այլևայլ խնդիրների ուսումնասիրությամբ և հայ հին ու նոր ժողովրդական բանահյուսության գիտական մասսայականացումով: Մեկը մյուսի ետևից առանձին զրթերով կամ գիտական պարբերականներում նա հրապարակ է հանում սովետահայ բանահյուսության նյութերն ու դրանց նվիրված հետազոտությունները: Ակնհայտ է, որ այս տեսակետից հատկապես 1946 թ. հրատարակած «Հայ ժողովրդական բանահյուսություն» դասընթացի XI պրակտ⁵, նվիրված սովետահայ բանահյուսությանը, 1961 թ. տպագրած «Լենինը ժամանակակից հայ ժողովրդական բանահյուսության մեջ» աշխատությունը և այլն: Նշված ուսումնասիրություններում տրված էին սովետահայ բանահյուսության ընդհանուր բնութագիրը, ավանդական բանահյուսության հետ նրա ունեցած ժառանգական աղբյուրները, բնորոշված ու քննված էին նրա թեմաներն ու հիմնական մոտիվները: Բայց Ղանալանյանի գիտական շահագրգռությունների բուն առարկան մնում է ավանդական բանահյուսությունը: 1938 թ. նա հրատարակում է «Նմուշներ հայկական հակակրոնական ֆուկլորից» հատընտիր ժողովածուն⁷ փոքրիկ ներածությամբ:

Ա. Ղանալանյանն առանձնակի ծառայություններ ունի մեր ժողովրդական մեծ վեպի՝ «Սասնա ծռերի» գրառման ու պրոպագանդման բնագավառում: 1930-ական թթ. սկզբներին, երբ նախապատրաստվում էր «Սասնա ծռերի» գիտական հրատարակությունը, վեպի նոր պատումներ գտնելու և գրառելու համար մեզանում առաջ է գալիս վիպահավաքման մի ամբողջ շարժում, որի գործուն մասնակցություն է ցույց տալիս սկսնակ բանագետ Ա. Ղանալանյանը: 1933 թ. սպարկերտցի Փառիկ Վարդանյանից նա գրառում է «Սասնա ծռերի» Դավթի տարբերակներից մեկը («Թլուլ Դավթ»)՝⁸, որն անկախ իր ընդհանուր արժանիքներից, մինչև այժմ էլ մնում է որպես «Սասնա ծռերի» առաջին և միակ կին բանասացի պատումը: 1936 թ. Ա. Ղանալանյանը բաշկալեցի Վարդան Վարդանյանից գրի է առնում դարձյալ Սասունցի Դավթի մի նոր պատում («Սասունա Տավթ»)՝⁹, երիտասարդ բանագետի նախասիրությունները մեր ժողովրդական վեպի նկատմամբ առանձնապես ցայտուն են դրսևորվում «Սասնա ծռերի» հորելյանական հազարամյակի օրերին, երբ Սովետական Հայաստանի կառավարության հանձնարարությամբ Մ. Արեղյանի և Գ. Արովի հետ միասին նա կազմում է «Սասունցի Դավթ» հյուսվածո-համահավաք բնագիրը¹⁰, որը խոշոր դեր խաղաց հայ ժողովրդական վեպի ինչպես համագգային, այնպես էլ միջազգային տարածման ու ճանաչման համար: Ա. Ղանալանյանը կազմել էր տվյալ բնագրի Դավթի «նյութի 2-րդ»՝ «Դավթ և Խանդուխտ» մասը, ինչպես նաև «Պատիկ Մհեր» ճյուղը: Դարձյալ նույն հորելյանական օրերին Ա. Ղանալանյանը գրում է «Սասնա ծռերին» նվիրված մի քանի հետազոտություն, որոնցից հիշարժան են հատկապես երկուսը՝ «Սասունցի Դավթ»¹¹ և «Սասունցի Դավթի» պատմիչների կյանքն ու ստեղծագործությունը»¹²: Առաջինում հեղինակը հենվելով նախորդ հետազոտողների, հատկապես Մ. Արեղյանի՝ վեպի ուսումնասիրությունից հանված հիմնական եզրակացությունների վրա և դրանք համալրելով նորանոր մտահանգումներով, սեղմ, բայց կուռ ու ամբողջական պատկերացում է կազմել տալիս վեպի նյութի պատմական ատաղձի, նրանում արտացոլված ժողովրդական կյանքի ու կենցաղի, գաղափարական բովանդակության և արվեստի էական հատկանիշների մասին: Գիտա-պատմական կարևոր նշանակություն ունեն, մասնավորապես, վեպի գաղափարաբանության և գեղարվեստական առանձնահատկությունների նոր բացահայտումները:

Երկրորդ ուսումնասիրության մեջ Ղանալանյանը բացահայտում է վեպի վրա վիպահանգների զբաղմունքների ու սոցիալական վիճակի, աշխարհագրական միջավայրի, հոգեբանության, աշխարհայացքի, բնավորության խառնվածքի, ձիրքի ու շնորհի ունեցած ազդեցությունները: Հեղինակը այդ ազդեցությունների մեջ մի կողմից ցուցահանում է կենդանի հարա-

5 Ա. Ղանալանյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, պրակտ Ա, Սովետահայ բանահյուսություն, Երևան, 1946:

6 ՀՍՀՍ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1961, № 7:

7 «Նմուշներ հայկական հակակրոնական ֆուկլորից», ժողովածու, կազմեց և խմբագրեց Ա. Ղանալանյան, Երևան, 1938:

8 «Սասնա ծռեր», հատ. Ա, խմբագրեց պրոֆ. դր. Մանուկ Արեղյան, աշխատակցությամբ Կարապետ Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1936, էջ 815, ԺԸ պատում:

9 «Սասնա ծռեր», հատ. Բ, մասն երկրորդ, Երևան, 1951, էջ 617, ԻԱ պատում:

10 «Սասունցի Դավթ», հայ ժողովրդական էպոս, Երևան, 1939:

11 Ա. Ղանալանյան, Սասունցի Դավթ, հայ ժողովրդական վեպ, Երևան, 1939:

12 «Նորհրդային գրականություն», 1932, № 8—9:

սևող ժողովրդական վեպի դարավոր փոփոխությունների պատճառների զգալի մասը, մյուս կողմից վիպասացների մեծամասնության աշխատավորական խավերին պատկանելու փաստով է մեկնաբանում «Սասնա ծռերի» ռամկական-աշխատավորական ոգին ու զաղափարախոսությունը:

Մեր վիպական բանահյուսության և՛ Ղանալանյանին շահագրգռած մյուս տեսակը հեքիաթ-նուրն են, որ նրա ուշադրությանն էր արժանացել տակավին իր գիտական գործունեության սկզբում: 1950 թ. լույս է տեսնում և՛ Ղանալանյանի կազմած և խմբագրած հայ ժողովրդական հեքիաթների ոտավոր հավաքածուն¹³, արժեքավոր ներածական ուսումնասիրությամբ: Լեյստեղ սողալին անգամ մեր բանագիտության մեջ սեղմ ու ամփոփ գծերով բնորոշվում էին հայկական հեքիաթների հիմնական տեսակները, համակարգվում էին նրանց սյուժետային զլխավոր տիպերը, բնութագրվում էին հեքիաթների գործող անձինք և բացահայտվում հեքիաթների գոյացման պատմաշրջանները, սոցիալ-դասակարգային հիմքերը, ինչպես նաև՝ հասարակական-զաղափարական զլխավոր միտումները: Լեյս ներածությունը վերամշակված ձևով վերահրատարակվում է 1965 թ.¹⁴ հեքիաթների ազգային ու միջազգային հատկանիշների հարաբերակցության բացահայտմամբ և նրանց հասարակական-դաստիարակչական, պատմա-ճանաչողական ու գեղարվեստական կողմերի արժեքավորմամբ համալրված ու բնորոշված:

Միևնույն թվականին «Հայաստան» հրատարակչությունը լույս է բնծայում և՛ Ղանալանյանի կազմած և ծանոթագրած հայկական հեքիաթների ռուսերեն ժողովածուն¹⁵, ուր իբրև ներածություն զրկված է հիշյալ հետազոտության համառոտությունը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին և՛ Ղանալանյանը քաղաքացիական բարձր գիտակցությամբ իր գրիչն ու մասնագիտությունը գնեք է դարձնում ժողովրդական հոծ զանգվածներին անցյալի ժողովրդականացած հերոսների կերպարներով ու սխրանքներով ոգևորելու, հայրենասիրությամբ և սեփական ուժի նկատմամբ հավատով ու վստահությամբ զինելու համար: Նա գրում է գիտա-հանրամատչելի բնույթի մի շարք գրքեր, որոնց մեջ հայոց անցյալի ու ներկայի նշանավոր քաղորդիկների (Գիսակ, Բագուս, Խուժեցի Հովնան, Կիլիկեցի Տիգրան, Այծմամիկ, Ղուլթունցիներ՝ Հակոբ, Մարկոս, Վանի Յուզբաշի, Սամսոն Տեր-Պողոսյան, Մեսրոպ Ղազարյան) գործած անձնագոհ սխրանքների նկարագրությամբ ժողովրդին վստահություն ու հավատ է ներշնչում իր սեփական ուժերի նկատմամբ¹⁶, մյուս կողմից հայ բանահյուսության հերոսապատումների («Հայկ ու Բել», «Պարսից պատերազմ», «Սասնա ծռեր») զլխավոր գործող անձանց առնական բնավորությունների, նրանց դուրսագնական-հայրենասիրական արարքների բացահայտմամբ սեր ու ոգևորություն է առաջացնում ժողովրդի մեջ սեփական հայրենիքի ու նրա պաշտպանության հանդեպ¹⁷, Իսկ հին բանահյուսության մեջ օտար թշնամիների կերպարների ներքին ու արտաքին ալլանդակությունների ցուցահանումով¹⁸ Ղանալանյանը ատելություն, ոխ ու պայքարի անհողողդ տրամադրություն է առաջացնում դեպի ժամանակի ահեղ թշնամին:

Լեյս տարիներին նա գրում է նաև Ֆրիկին նվիրված գրականագիտական մի հետազոտություն¹⁹, ուր կուռ ու սեղմ ոճով, պատմական տեսողաշտի վրա սովորագծվում էր միջնադարյան մեծ բանաստեղծի ստեղծագործական դիմապատկերը:

Հայրենական պատերազմից անմիջապես հետո Ղանալանյանը ձեռնամուխ է լինում հայ ժողովրդական բանահյուսության ուսումնական դասընթացի շարադրմանը: Թեև հիշյալ առարկայի դասավանդումը Լեյսի ջանքերով տակավին անցյալ դարավերջից մեկնդմիշտ արմատավորվել էր մեր բարձրագույն դպրոցների ուսումնական ծրագրերում, սակայն առարկայի ամբողջական ու սխտեմատիկ մշակված դասընթաց չկար: Հենվելով իր մասնագիտական գիտելիքների ու գիտա-մանկավարժական հարուստ փորձի վրա, Ղանալանյանին հաջողվում է մաս-

13 «Հայ ժողովրդական հեքիաթներ», կազմեց և խմբագրեց և՛ Ղանալանյան, Երևան, 1950, 566 էջ: Տե՛ս նաև նույնի ռումիներեն թարգմանությունը՝ „Basme Populare Armene“, Carta Rusă, 1958.

14 Ա. Տ. Ղանալանյան, Հայ ժողովրդական հեքիաթները, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3.

15 «Армянские народные сказки». Вступительная статья, составление и примечания А. Т. Г а н а л а н я н а, Ереван, 1965.

16 և՛ Ղանալանյան, Հայ քաղորդիկներ, Երևան, 1943.

17 և՛ Ղանալանյան, Հայ ժողովրդի հերոսապատումները, Երևան, 1942.

18 և՛ Ղանալանյան, Թշնամու կերպարը հայկական հին բանահյուսության մեջ, Երևան, 1943.

19 Ա. Ղանալանյան, Ֆրիկ, Երևան, 1944.

նակիրորեն լրացնել այդ բացը. 1945—46 թթ. ընթացքում նա կազմում և հրատարակում է հայ ժողովրդական բանահյուսության ուսումնական ձեռնարկի չորս պրակ, որոնք ընդգրկում էին հայ բանագիտության համառոտ պատմությունը, ժողովրդական երգերը, առած-ասացվածքները և սովետահայ բանահյուսությունը²⁰:

Ա. Ղանալանյանի գիտական շահախնդրությունների մեջ կարևոր տեղ է գրավում նաև ժողովրդական բանահյուսության և գրականության փոխադասարկությունների հարցը:

Հայ նոր գրականությունն սկզբից իսկ, պատմական և զաղափարաբանական հանգամանքների շնորհիվ, ձեռք է բերում իր կարևորագույն հատկությունը՝ շեշտված ժողովրդայնությունը, որ կարգավորվում է մեծ և փոքր բանահյուսության միջով՝ Լեռնային սկսած մինչև Իսահակյանն ու հաջորդները: Ահա, Ա. Ղանալանյանը, ըստ էության, իր առջև նպատակ է դնում, առանձին ուսումնասիրությունների ձևով, Լեռնային մինչև Իսահակյան հետազոտել հայ նոր գրականության ժողովրդական հիմունքները:

1930-ական թթ. վերջերից ի վեր Ա. Ղանալանյանը, հեղինակ առ հեղինակ, սխտեմատիկ ուսումնասիրության առարկա է դարձնում հայ նոր գրականության և բանահյուսության փոխադասարկությունների խնդիրը: Առաջին արդյունքը «Պոռնյանը և ժողովրդական բանահյուսություն» է (1938), որին երեք տարի անց հաջորդում է «Լեռնային և ժողովրդական բանահյուսությունը» համեմատաբար ծավալուն աշխատությունը (1941): Ղանալանյանը ցույց է տալիս, որ բանահյուսական նյութը Լեռնային և Պոռնյանի երկերում զաղափարախոսական աղբյուր ու ստեղծագործական առարկա է ծառայել հեղինակների աշխարհայացքի պարզաբանման, հերոսների տիպականացման ու անհատականացման, երկերի գեղարվեստական կառուցվածքի ու լեզվաբանական միջոցների կատարելագործման համար: Բացի այդ, երկու հեղինակներն էլ իրենց երկերում, դարձյալ միևնույն նպատակներով, գրական-ստեղծագործական մշակումների են ենթարկել բանահյուսական նյութերը կամ դրանց նմանությամբ հորինել ինքնուրույն գործեր: Ժողովրդական-բանահյուսական նյութերի անմիջական ու ստեղծագործական կիրառության այս ավանդներն այնուհետև Ա. Ղանալանյանը բացահայտում է ու վերլուծում մեր հետազոտողների ու բանաստեղծների երկերում: Առանձնակի արժեք են ներկայացնում հատկապես մեր երեք մեծ բանաստեղծներին՝ Թումանյանին²¹, Իսահակյանին²² և Սայաթ-Նովային²³ նվիրած հետազոտությունները, որոնց մեջ բացահայտված են ու քննված նրանց ստեղծագործությունները սուղացած ու անմահացրած բանահյուսական ակունքները: Եթե Թումանյանի և Իսահակյանի երկերը վերլուծելիս Ղանալանյանը երևան է հանում բանահյուսական նյութի օգտագործման երկու հիմնական միտում՝ նյութի բանաստեղծական մշակումներ և բանահյուսության արտահայտչամիջոցների ստեղծագործական կիրառումներ, ապա Սայաթ-Նովայի մոտ նա մեկ զխավոր ուղղություն է բացահայտում՝ բանահյուսական նյութերի (հայկական և ընդհանուր արևելյան) և արտահայտչամիջոցների ստեղծագործական կիրառումը: Ինչպես նախորդ, այնպես էլ հիշյալ բանությունների ժամանակ Ղանալանյանը չի բավարարվում միայն հեղինակների մոտ բանահյուսության նյութի ու առարկայի սուկ արձանագրումով, այլև բացահայտում ու վերլուծում է այդ նյութի վերամշակման ու օգտագործման բանաստեղծական հնարանները, որով տվյալ աշխատությունները ձեռք են բերում նաև գրականագիտական արժեք: Բսկ երբ նկատի ենք ունենում, որ այս, ինչպես նաև «Մ. Նալբանդյանը և ժողովրդական բանահյուսությունը»²⁵ աշխատություններում նմանօրինակ բանություններով Ղանալանյանը նպատակ է հետապնդում ապացուցել հայ հոր, մասամբ և նախընթաց գրականության հիմնական ոգու ժողովրդայնությունն ու շեշտված գեղարվեստիկ մեթոդը, ապա միանգամայն պարզ կդառնա նշված հետազոտությունների գրա-պատմագիտական արժեքը:

20 Ա. Ղանալանյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, պրակ Ա, Հայ բանագիտություն, Երևան, 1945, պրակ Ը, Ժողովրդական երգեր, Երևան, 1945, պրակ Բ, Առանձին և ասացվածքներ, Երևան, 1946, պրակ ԺԱ, Սովետահայ բանահյուսություն, Երևան, 1946:

21 Ա. Ղանալանյան, Թումանյանը և ժողովրդական բանահյուսությունը, «Թումանյան» (ուսումնասիրություններ և հրապարակումներ), 1, Երևան, 1964:

22 Ա. Ղանալանյան, Սայաթ-Նովայի ստեղծագործության ժողովրդական ակունքները, Երևան, 1955:

23 Ա. Ղանալանյան, Սայաթ-Նովայի ստեղծագործության ժողովրդական ակունքները, Երևան, 1963:

24 «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1:

Ղանալանյանի այս հետազոտությունները մասն են կազմում նրա տակավին անտիպ «XIX դարի հայ դրականությունն ու ժողովրդական բանահյուսությունը» ծավալուն մենագրության, ուր ամբողջական հետազոտման է ենթարկվում հայ նոր գրականության և ժողովրդական բանահյուսության աղբյուրականության հարցը:

Ա. Ղանալանյանը իր երկարամյա գիտահետազոտական գործունեության ընթացքում բերադրել է նաև հայագիտության պատմության խնդիրներով. մասնավորապես առանձին հայագիտների կյանքի ու գիտական գործունեության ուսումնասիրությամբ, նրանց երկերի գիտական հրատարակությամբ: Ուսումնասիրությունների մի մասը նվիրված է նշանավոր հայագետների՝ հայ ժողովրդական բանահյուսության մարզում կատարած հետազոտությունների և հայ բանագիտության առաջընթացի մեջ դրանց խաղացած դերի գիտա-պատմական գնահատությանը²⁵, իսկ մյուս մասը՝ առանձին հայագետների և հատկապես նշանավոր բանագետների կյանքին ու գիտական գործունեությանը²⁶:

Վերջին կարգի գործերից գիտա-պատմական առանձնակի նշանակություն ունեն Մ. Արեղյանին և Գ. Սրվանձտյանին նվիրված հետազոտությունները: Սրվանձտյանի մասին մինչև Ղանալանյանը թեև գրվել էին մի քանի հոդվածներ, տրվել առանձին գնահատականներ, բայց դրանք ղեկն մանրամասն ու ամբողջական պատկերացում չէին տալիս նրա կյանքի ու գործունեության վերաբերյալ: Ղանալանյանն առաջինն է, որ (թեպետ հիմնականում գրականության ու բանահյուսության պատմության տեսանկյունից) ամփոփում և ամբողջացնում է Սրվանձտյանի՝ իբրև բանահավաք-ազգագրագետի ու բանաստեղծի լիարժեք կերպարը: Նա Սրվանձտյանի ժառանգության ու պատմական դերի կոնկրետ քննությամբ դարձյալ վերահաստատում է նրան պատմական կոչման բարձրության վրա՝ իբրև հայ ժողովրդագիտության ռազմիրայի:

Մեծ են Ա. Ղանալանյանի ճանաչությունները իր ուսուցչապետի՝ Դանուկ Արեղյանի գիտական վաստակը ըստ արժանվույն գնահատելու, պրոպագանդելու և հրատարակելու ուղղությամբ: Նա առաջիններից մեկն էր, որ Արեղյանի մահվանից հետո իր մի շարք ուսումնասիրություններով ու հոդվածներով ձեռնամուխ է լինում Արեղյանի թողած ժառանգության գիտա-պատմական քննությանը, հայագիտության մեջ Արեղյանի խաղացած վիթխարի դերի ճշմարտացի գնահատությանը:

Նախորդ հայագետների նկատմամբ Ղանալանյանի ունեցած այս ազնիվ վերաբերմունքը եթե մի կողմից պայմանավորված է դասական հայագիտության ավանդների ժառանգորդությամբ, ապա մյուս կողմից վկայում է նրա մարդկային, քաղաքացիական ու գիտական առաքինության մասին: Այսպիսի վերաբերմունք նա ցուցաբերել է ոչ միայն իր նախորդների, այլև բարձրացող գիտական նոր սերնդի նկատմամբ. նա եղել է ամեն մի շնորհալի սկսնակի իսկական հովանավոր ու դաստիարակ, խորհրդատու և մտերիմ բարեկամ:

Արամ Ղանալանյանը տրորված արահետներով քայլող գիտնականներից չէ. նա համարձակ կիրպով ձեռնարկում է բանագիտության չհետազոտված բնագավառների ուսումնասիրությանը ու բացում իր սեփական ուղին:

25 Ա. Ղանալանյան, Ն. Մառը հայ բանահյուսության մասին, ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի «Աշխատությունների ժողովածու», հատ. 1, Երևան, 1946, տե՛ս նաև նույնի վերամշակված հրատարակությունը՝ «Ն. Մառը և հայ բանահյուսությունը», «Մառը և հայագիտության հարցերը» ժողովածուում, Երևան, 1968: Ա. Ղանալանյան, 2. Օրբելին և հայկական էպոսը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 3: Ա. Ղանալանյան, Մանուկ Արեղյանի իբրև ֆուլկլորագետ, «Գրական-բանասիրական հետախուզումներ», գիրք Ա, Երևան, 1946:

26 Ա. Ղանալանյան, Մ. Արեղյանի կյանքն ու գործունեությունը, «Սովետականգրականություն», 1955, № 14: «Մանուկ Խաչատուրի Արեղյան», Բիբլիոգրաֆիա, ներածություն, Երևան, 1963: Մ. Արեղյան, Երկեր, Ա, Երևան, 1965, Ա. Ղանալանյանի առաջաբանը: Ա. Ղանալանյան, Վաստակավոր հայագետը, պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանի ծննդյան 70-ամյակի սոթիվ, «Դատմա-բանասիրական հանդես», 1963, № 2: Ա. Ղանալանյան, Գարեգին Սրվանձտյանց, «Հայ նոր գրականության պատմություն», հատ. III, Երևան, 1964: